

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական կայունության ապահովումը յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի արդյունավետ գործունեության կարևորագույն պայմաններից մեկն է: Ապահովագրողների նկատմամբ իր պարտավորությունները կատարելու ապահովագրական ընկերության անկարողությունը վերացնում է ապահովագրության՝ որպես ֆինանսական կորուստներից պաշտպանվելու միջոցի գաղափարը¹: Ապահովագրական ընկերությունների ոչ արդյունավետ գործունեության պատճառներից հիմնականը ֆինանսական կայունության հիմնախնդիրն է²:

Մակրոտնտեսական առումով ֆինանսական կայունությունը բնորոշվում է որպես տնտեսական հարաբերությունների բոլոր մասնակիցների անխաթար գործունեության և հետևողական զարգացման հնարավորություն: Սակայն ապահովագրողների համար ֆինանսական կայունության ապահովումն իրենց անմիջական գործունեության առարկան է, որը թույլ է տալիս նրանց գործել շուկայում: Ապահովագրական ծառայությունների սպառողների համար ապահովագրողները ֆինանսական կայունության երաշխավորներն են, ուստի ֆինանսական կայունության, վճարունակության գնահատման հիմնախնդիրը ձեռք է բերում առաջնային նշանակություն ապահովագրական հարաբերությունների բոլոր մասնակիցների համար:

Ֆինանսական կայունության հարցը բազմիցս քննարկվել է ապահովագրական գործն ուսումնասիրող հայրենական և օտարերկրյա տեսաբանների կողմից: Դիտարկվող ոլորտում կիրառվող մոտեցումներն ու սկզբունքները պարբերաբար ենթարկվում են որոշակի փոփոխությունների, քանի որ տարբեր երկրներին բնորոշ առանձնահատկությունները և զարգացման մակարդակները չեն կարող թույլ տալ այսպես կոչված «ունիվերսալ» կամ համընդհանուր մոտեցումների օգտագործում: Ամենայն հավանականությամբ, դա է պատճառը, որ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման հարցում դեռևս չկա միասնական մոտեցում:

Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները ելակետ են ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների (վճարունակության, իրացվելիության, շահութաբերության, կապիտալի համարժեքության ցուցանիշներ և այլն) զարգացման համար:

Բազում նկատառումներ պետք է հաշվի առնվեն ցուցանիշների տվյալների հավաքագրման և մեկնաբանման ժամանակ, ներառյալ հաշվապահական հաշվառման հիմնական տվյալների որակը, ապահովագրական ընկերությունների կառավարման կառուցվածքը և ղեկավարման ու վերահսկողության որակը: Ֆինանսական կայունության ցուցանիշները չեն կարող ներգրավել ֆինանսական կայունության համար կարևոր համակարգի բոլոր տեսանկյունները մի քանի նշանակալից տեղեկությունների որակական բնույթի պատճառով (քանակապես ոչ չափելի): Ֆինանսական կայունության ցուցանիշների մեկնաբանությունն առավել լավ ըմբռնելու համար կարևոր է համալրել վերլուծություններն այն տեղեկատվությամբ, որը առավել ճշգրիտ է

¹ Телепин Я.Е. Финансовая устойчивость и платежеспособность страховых компаний // Страховое дело. - 2005. - № 1. - с. 9 - 16.

² Архипов А. П., Федорова Т.А. Управление страховой компанией в условиях кризиса платежеспособности // Финансы. - 1996. - №11. - с. 40-43.

նկարագրում հիմնական տվյալների բնույթը, ֆինանսական համակարգի կառուցվածքը և համակարգը կազմող հաստատությունների բնութագրությունները:

Ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշներից շատերը ներկայացված են մաս CAMELS համակարգում, որը լրացնում է բանկային համակարգում կիրառվող CAMELS վերլուծական համակարգը:

CAMELS վերլուծական համակարգի անվանումն առաջացել է նրանում ներառված ամփոփիչ տարրերի անգլերեն տերմինների տառային հապավումից. դրանք են՝

- Կապիտալի համարժեքությունը (Capital adequacy),
- Ակտիվների որակ (Asset quality),
- Վերաապահովագրություն և ակտուարական խնդիրներ (Reinsurance, actuarial issues)
- Կառավարում (Management),
- Եկամուտ և շահութաբերություն (Earnings),
- Իրացվելիություն (Liquidity)
- Զգայունություն շուկայական ռիսկի նկատմամբ (Sensitivity):

Յուրաքանչյուր ցուցանիշ իր սահմանային միջակայքով որոշակիորեն ազդեցություն է ունենում ամփոփիչ գործոնի մեծության վրա: Հարկ է նկատել, որ այս կամ այն ցուցանիշը կարելի է կիրառել տարբեր գործոններում, օրինակ՝ կապիտալի շահութաբերության ցուցանիշը՝ շահույթի հարաբերակցությունը կապիտալին, միաժամանակ բնութագրում է երկու գործոններ՝ կապիտալի համարժեքությունն ու շահութաբերությունը: Նման օրինակները բազմաթիվ են, հետևաբար CAMELS համակարգի կիրառման մեթոդաբանական խնդիրներից մեկն ամփոփիչ ցուցանիշի վրա միևնույն ցուցանիշների հակադարձ ներգործության աճը կամ չեզոքացումն է: Անհրաժեշտ է նշել, որ այս համակարգի գործնական կիրառելիության առավելությունն ապահովագրական ընկերության գործունեության ամփոփ գնահատումն է: Իհարկե, համակարգը ներառում է մաս գնահատման սուբյեկտիվ ցուցանիշներ, որոնք հիմնվում են որոշակի օբյեկտիվ չափորոշիչների վրա: Օրինակ՝ մենեջմենթի գնահատման համար հիմք կարող են ծառայել ապահովագրական ընկերության բարձր, միջին, ստորին անձնակազմի որակավորման աստիճանը, գործելակարգերի կանոնակարգվածությունը և այլն: Ընդհանուր առմամբ CAMELS-ի բոլոր գործոններում առանձնահատկությունը տարբեր ցուցանիշների աճի տեմպերի համադրումն է, որն էլ հնարավորություն է տալիս ապահովագրական ընկերության գնահատման արդյունքում տեսանելի դարձնել ամփոփ գնահատականի ձևավորման միտումները: CAMELS-ի առանձին գործոնների և ընդհանուր գնահատումը կատարվում է հինգ բալանոց համակարգով, իսկ վերջնական ամփոփ գնահատականը ձևավորվում է դրանց միջին թվաբանականների արդյունքներով՝ համապատասխան կշիռները հաշվի առնելով:

CAMELS-ի համակարգով գնահատման ամփոփ գնահատականները կարելի է դասակարգել հինգ մակարդակի, որոնք համապատասխանում են 5, 4, 3, 2, 1 գնահատականներին.

- առավելագույն,
- լավ,
- բավարար,
- սահմանային,
- անբավարար:

Առավելագույնը վկայում է ապահովագրական ընկերության կառավարման համակարգի ուժեղ կարողությունների մասին, որտեղ առկա են ընկերության կողմից ռիսկերի կառավարման բարձր արդյունավետությունը, ռիսկերի համարժեք գնահատման, վերահսկման, մոնիթորինգի, ռիսկերի բացասական հետևանքների ներգործության սահմանափակման, ժամանակին հակազդեցության, մեղմացման և վերացման համարժեք մեխանիզմներ, որոնք էլ թույլ են տալիս ապահովագրական ընկերությանը զերծ մնալ նյութական կորուստներից: Այսպիսի ընկերություններն իրականացնում են ռազմավարական և օպերատիվ խնդիրների իրականացմանն ուղղված հավասարակշռված և արդյունավետ քաղաքականություն:

Լավ գնահատականն արտացոլում է ապահովագրական ընկերության կողմից ռիսկերի քաղաքար կառավարման համակարգը, երբ ընկերությունները ժամանակին համարժեք լուծումներ են կիրառում առաջացած բարդությունները վերացնելու ուղղությամբ, և որոնք թույլ են տալիս կանխել շոշափելի նյութական կորուստները: Այսինքն՝ ընկերության կառավարման համակարգը հիմնականում կարողանում է հակազդել առաջացած ռիսկերին: Ի տարբերություն առաջինի՝ համեմատաբար թերի են ռիսկերի վաղ կանխարգելման համակարգն ու մեխանիզմները: Դա որպես արդյունք թուլացնում է ռիսկերին դիմակայելու ներուժը և դրանց հետևանքների իսպառ վերացման հնարավորությունները:

Բավարար գնահատականը վկայում է, որ ընկերությունը չունի ռիսկերի կառավարման համարժեք կարողություն՝ դրանց վաղ կանխարգելման, ի հայտ եկած ռիսկերի ներգործության նվազեցման, հակազդեցության և վերացման ուժեղ մեխանիզմներ:

Սահմանային գնահատականը ցույց է տալիս, որ ընկերության ռիսկերի կառավարման համակարգն իր մեխանիզմներով ու ընդհանուր կարողություններով թույլ է, ու մեծ է շոշափելի կորուստների առաջացման հավանականությունը: Այստեղ անհրաժեշտ է իրականացնել ռիսկերի կառավարման առանձին օղակների վերակառուցում:

Անբավարար գնահատականն արտացոլում է ընկերության ռիսկերի կառավարման ոչ համարժեքության, անգործունակության կամ նույնիսկ դրա հիմնական տարրերի, ինչպես նաև ամբողջականության բացակայությունը, որի արդյունքում առաջացել է կամ կարող է առաջանալ ֆինանսական ոչ կայուն վիճակ: Նման իրավիճակը պահանջում է անմիջապես իրականացնել համակարգված միջամտություն, բազմակողմանի ռեսուրսների, կարողությունների, մասնավորապես ֆինանսական, մասնագիտական, կազմակերպական, ակտուարական, ներգրավմամբ ու մասնակցությամբ:

CARAMELS-ի կարևոր առավելություններից մեկն այն է, որ գործոնների գնահատման ընթացքում հաշվի է առնվում ամփոփ գործոնների փոխկապակցվածության օրինաչափությունը, օրինակ՝ եթե շահութաբերության գործոնը գնահատվել է 3, ապա կապիտալի համարժեքության գործոնը չի կարող լինել 5: Որպես կանոն, փոխկապակցված գործոնների գնահատման տատանումը մեկ միավորից ավել չի կարող լինել:

Այսպիսով, այս մոտեցումը ենթադրում է ապահովագրական ընկերության գործունեության ռիսկայնության բազմագործոն վերլուծություն և գնահատում: CARAMELS համակարգը կարևոր է ապահովագրական ընկերությունների մոնիթորինգի և վերահսկողության համար, որի արդյունքները ելակետ են առավել մանրակրկիտ վերլուծությունների համար և կարող են ծառայել ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության հիմնախնդիրների լուծմանը: